ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, իսկ սույն քաղաքացիական գործով 25.07.2023թ.-ի վերաքննիչ բողոքի ներկայացման համար պետական տուրքի գումարը պատասխանողի կողմից ամբողջությամբ վճարվել է, քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, հայցի բավարարման պայմաններում, Դատարանը գտնում է, պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել հայցվորի կողմից նախապես վճարված՝ 50.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

4. Վճռի օրինական ուժի մեջ մտնելը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, սույն վճիռն օրինական ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխի, 198 և 360-362 հոդվածների նորմերով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. Հայցը բավարարել:

1.1. Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի կողմից 10.04.2023 թվականին կայացված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին թիվ 770-Ա որոշումը մասնակիորեն՝ <<Մանվելյանշին>> ՍՊԸ-ին վերաբերվող մասով, ճանաչել անվավեր:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ <<Մանվելյանշին>> ՍՊԸ-ի բռնագանձել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես վերջինիս կողմից հայցադիմումի ներկայացման համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Վ. ԹՈՐՈՍՅԱՆ